

# ՀՈԴՎԱԾՆԵՐ



## ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Գ. Ս. ԱՂԱԶԱՆՅԱՆ

XX դարի երկրորդ կեսից սկսած բնակչության զանգվածային միգրացիան դարձել է համաշխարհային հանրության կյանքի բնորոշ կողմերից մեկը: ՄԱԿ-ի տվյալներով միջազգային միգրանտների թիվը 2000թ. հասել էր 175 մլն-ի, որը կազմում էր աշխարհի բնակչության մոտ 3 % -ը<sup>1</sup>:

Վերջին 1,5 տասնամյակում մի շարք արտակարգ գործոնների ազդեցությամբ ՀՀ-ն մույնպես ընդգրկվել է աշխարհի մասշտաբով տեղի ունեցող միջպետական (արտաքին) միգրացիոն գործընթացներում, որոնց առնչվող հարցերը բավական խորությամբ լուսաբանվել են Վ. Ե. Խոջաբեկյանի<sup>2</sup>, Վ. Վ. Բաղդասարյանի<sup>3</sup> և ուրիշների աշխատություններում, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր «Միգրացիայի և փախստականների վարչության» համապատասխան փաստաթղթերում: Մեր խնդիրն է ուսումնասիրել, թե վերջին մեկուկես տասնամյակում արտագաղթը սոցիալ-տնտեսական ինչ հետևանքներ է թողել ՀՀ-ի վրա: Սկզբից ասենք, որ դրանք եղել են և՛ դրական, և՛ բացասական:

Նախ քննարկենք դրական հետևանքները:

1. Արտագաղթը ինչ-որ չափով բարելավել է ՀՀ-ի աշխատուժի շուկան: Այն երկրներում (այդ թվում՝ ՀՀ-ում), որտեղ աշխատուժի շուկան ավելցուկային է, արտագաղթի հետևանքով, որպես կանոն, նշանակալի չափով կրճատվում է տվյալ երկրի գործազուրկների թիվը: Թեև արտագաղթը մասամբ թուլացրել է լարվածությունը ՀՀ-ի աշխատուժի շուկայում, այնուամենայնիվ գործազրկության մակարդակը Հայաստանում դեռևս մտահոգիչ է: ԱՊՀ երկրների մեջ Հայաստանը գործազրկության մակարդակով Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի հետ բաժանում է I-IV տեղերը: Միջին հաշվով ՀՀ-ն տարեկան ունեցել է 9-12 % գործազրկության մակարդակ: Այդ մասին են վկայում թիվ 1 աղյուսակի տվյալները:

ԱՊՀ երկրների գործազուրկների մեջ կանանց տեսակարար կշիռը տատանվում է 56-80%-ի սահմաններում, բացի Տաջիկստանից (տե՛ս թիվ 2 աղյուսակի տվյալները):

Թիվ 2 աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 2000 թվականին 1992 թ. համեմատությամբ ԱՊՀ երկրներում նախ եռակի և ավելի աճել է գործազուրկների թիվը, երկրորդ՝ գործազուրկների մեջ կանանց տեսակարար կշիռը կրճատվել է ընդամենը 8 % -ով, 72-ից իջել է 64-ի:

<sup>1</sup> Տե՛ս **И. П. Цепенко**, Роль иммиграции в экономике развитых стран, "Мировая экономика и международные отношения", журнал, 2004 , № 5, էջ 27:

<sup>2</sup> Տե՛ս **Վ. Ե. Խոջաբեկյան**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Եր., 2001:

<sup>3</sup> Տե՛ս **Վ. Վ. Բաղդասարյան**, Արտագաղթը և նրա սոցիալ-տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2002:

Աղյուսակ 1

**Գործազրկության մակարդակը ԱՊՀ երկրներում 1992-2000 թթ.  
(տարվա միջինը տնտեսապես ակտիվ բնակչության\* նկատմամբ՝ %-ով)՝**

ԱՊՀ երկրներ	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Ադրբեջան	0,2	0,4	0,6	0,7	0,8	1,0	1,1	1,2	1,2
Հայաստան	1,8	5,3	6,6	6,7	9,3	10,8	9,4	11,2	11,7
Բելառուս	0,2	1,1	1,8	2,5	3,8	3,5	2,5	2,2	2,1
Վրաստան	-	-	-	-	-	-	14,0	13,8	-
Ղազախստան	-	-	7,5	11,0	13,0	13,0	13,1	13,5	12,8
Ղրղրզստան	0,05	0,2	0,4	1,8	4,1	3,5	3,5	2,9	3,1
Մոլդովա	-	-	-	-	-	-	9,2	11,1	8,5
Ռուսաստան	5,2	5,7	7,4	8,5	9,6	10,8	11,9	12,7	10,5
Տաջիկստան	0,3	0,7	1,5	1,7	2,7	2,7	3,2	3,0	2,8
Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-
Ուզբեկստան	0,1	0,2	0,2	0,3	0,4	0,4	0,4	0,5	0,5
Ուկրաինա	-	-	-	-	7,6	8,9	11,3	11,9	11,7

Աղյուսակ 2

**ԱՊՀ երկրների գրավածության ծառայություններում գրանցված գործազուրկների մեջ կանանց տեսակարար կշիռը (տարվա վերջին)՝**

ԱՊՀ-ի երկրներ	Գործազուրկների թիվը հազար մարդ		Այդ թվում կանայք, ընդհանուրի նկատմամբ (%-ով)	
	1992	2000	1992	2000
Ադրբեջան	6,4	43,7	57	56
Հայաստան	56,3	153,9	64	65
Բելառուս	24,0	95,8	81	61
Վրաստան	113,2	116,9	-	-
Ղազախստան	33,7	231,4	74	57
Ղրղրզստան	1,8	58,3	73	54
Մոլդովա	15,0	28,9	61	59
Ռուսաստան	577,7	1037,0	72	69
Տաջիկստան	6,8	43,2	38	53
Թուրքմենստան	-	-	-	-
Ուզբեկստան	8,8	39,1**	64	67**
Ուկրաինա	70,5	1155,2	79	63
Ամբողջ ԱՊՀ-ի գծով	914,2	3003,4	72	64

ՀՀ-ում գործազրկությունը, որի մեջ բարձր տոկոս է կազմում տնտեսապես ակտիվ տարիքի (20-45) բնակչությունը<sup>6</sup>, դարձել է առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիր:

Գործազրկության մակարդակը ցանկացած երկրի, այդ թվում ՀՀ-ի տնտեսության վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է: Գործազրկության մակարդակի և տնտեսական աճի միջև գոյություն ունի կոռելյացիոն կապ: Ըստ

\* Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ մտնում են տնտեսության մեջ զբաղվածները և պաշտոնապես գրանցված գործազուրկները:

<sup>4</sup> Տե՛ս "10 лет Содружества Независимых Государств (1991-2000)", "Статистический сборник", М., 2001, էջ 738:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 122:

\*\* Բերված տվյալները վերաբերում են 1999 թվականին:

<sup>6</sup> Այժմ Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության որոշ մասը գտնվում է համապատասխան սահմաններից դուրս:

ամերիկյան անվանի տնտեսագետ Ա. Օուքենի օրենքի՝ բնական գործազրկության նկատմամբ փաստացի գործազրկության 1 % աճը հանգեցնում է երկրի պոտենցիալ ՀՆԱ-ի նկատմամբ իրական ՀՆԱ-ի 2-3 % նվազման, կամ, ընդհակառակը, փաստացի գործազրկության 1 % նվազմամբ իրական համախառն ներքին արդյունքը աճում է 2-3 %-ով<sup>7</sup>:

Փորձագետների կարծիքով գործազրկության իրական մակարդակը ՀՀ-ում ավելի բարձր է, քան պաշտոնապես այն ներկայացվում է, քանի որ գործազուրկներից շատերը չեն դիմում զբաղվածության ծառայություններին:

ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների մեջ մեծ է 18-50 տարեկան անձանց տեսակարար կշիռը (գրեթե 90 %): Գործազուրկների 14-16 %-ը ունի բարձրագույն, 75-80 %-ը՝ միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթություն: Գրանցված գործազուրկների 94 % - ից ավելին քաղաքաբնակներ են: Նրանց գրեթե 80 % -ը գործազուրկ է ավելի քան 1 տարի:

ՀՀ-ում գործազուրկների հսկայական բանակը մեծ ճնշում է գործադրում աշխատուժի շուկայում ձևավորվող հարաբերությունների վրա: Նաև դրանով պետք է բացատրել զբաղվածների աշխատավարձի ցածր մակարդակը:

Աշխատուժի շուկայում առաջարկի և պահանջարկի միջև առաջացող անհամասնությունները սերտ կապի մեջ են տնտեսության մյուս ոլորտների հետ:

Այսպես, բարեփոխումների ծրագրի իրականացումը միայն զբաղվածության բնագավառում չի կարող ապահովել բարձր արդյունավետություն, եթե հաշվի չեն առնվում տվյալ իրավիճակի առաջացմանը նպաստող արմատական պատճառները:

ՀՀ-ում գործազրկության մակարդակը նվազեցնելու համար պետք է ստեղծել նոր աշխատատեղեր: Իսկ դրա համար անհրաժեշտ են ներդրումային հսկայական միջոցներ, որոնց հայթայթումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Ընդ որում, նոր արտադրություն կազմակերպելու համար ոչ միայն ներդրումային միջոցների պակաս է զգացվում, այլև դրան կարող են խոչընդոտել հարկերի ծանրությունը, ներքին սպառողական շուկայի սահմանափակ գնողունակությունը և այլն: Այլ խոսքով՝ ՀՀ - ում գործազրկության հիմնախնդրի լուծումը պահանջում է տնտեսության մեջ կատարել մեծ չափերի հասնող կապիտալ ներդրումներ, իրականացնել արմատական փոփոխություններ տնտեսական քաղաքականության մեջ, մշակել հանրապետության բոլոր ոլորտների զարգացման համալիր ծրագրեր: Միայն նման միջոցառումների հետևողական իրականացումը հնարավորություն կտա կարճ ժամանակահատվածում նշանակալի չափով կրճատել գործազրկությունը հանրապետությունում:

Այսպիսով, վերջին 1,5 տասնամյակում արտագաղթը ՀՀ բնակչության մի մասին ստիպել է աշխատանք փնտրել արտերկրում, որը նպաստել է շատ թե քիչ բնականոն կենսագործունեությանը: Չարտագաղթելու դեպքում նրանց մեծ մասն անպայման կհամարյր գործազուրկների բանակը:

2. Աշխատող միգրանտները (արտագաղթածները) տարբեր ուղիներով իրենց հարազատներին են փոխանցում հսկայական ֆինանսական միջոցներ: Նրանց փոխանցումները (տրանսֆերտները) նպաստում են մեր երկրի ֆինանսական վիճակի բարելավմանը: Ճիշտ է, փոխանցված դրամական միջոցներն ամմիջակառորեն չեն մտնում պետական զանձարան, այնուամենայնիվ դրանք բարձրացնում են բնակչության եկամուտների մակարդակը և որոշ դրական

<sup>7</sup> Տե՛ս “Курс экономической теории”, М., 2000, էջ 406:

ազդեցություն են թողնում երկրի վճարային հաշվեկշռի վրա: Արտերկրներից ՀՀ ֆիզիկական անձանց անուճով ստացվող դրամական փոխանցումներում մեծ է Ռուսաստանից և ԱՄՆ-ից ստացված միջոցների (համապատասխանաբար՝ 69,7 և 7,4 %) տեսակարար կշիռը: Ռուսաստանից ստացվող դրամական փոխանցումների 45 %-ը բաժին է ընկնում Մոսկվա քաղաքին: ԱՄՆ-ից կատարվող փոխանցումների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն Կալիֆորնիայի և Նյու Յորքի նահանգները, որոնք կազմում են ամբողջ փոխանցումների համապատասխանաբար 39 և 25,7%-ը<sup>8</sup>:

### Աղյուսակ 3

#### Ընթացիկ տրանսֆերտների շարժը 1993-2003 թթ. ըստ ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի (մլն ԱՄՆ դոլար)<sup>9</sup>

	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընթացիկ տրանսֆերտներ, կրեդիտ (+)	56,3	106,3	170,0	198,9	252,4	203,0	200,8	208,5	200,8	199,7	245,0
Ընթացիկ տրանսֆերտներ, դեբետ (-)	-1,1	-0,8	-1,7	-14,4	-35,2	-25,6	-28,5	-20,5	-26,8	-26,3	-26,5
Տրանսֆերտների հաշվեկշիռ (+)	55,2	105,5	168,3	184,6	217,2	177,4	174,1	188,0	173,9	173,4	218,5

Իհարկե, աղյուսակում բերված տվյալները չեն կարող լիովին արտացոլել էմիգրանտների ուղարկած դրամական միջոցների շարժը, քանի որ մեր հայրենակիցները զգալի դրամական միջոցներ են ստանում այլ «ճանապարհներով», որոնք ոչ մի տեղ չեն գրանցվում: Մեր կարծիքով, տարբեր պատճառներով տրանսֆերտների մուտքը հանրապետություն աստիճանաբար կպակասի: Էմիգրանտների ուղարկած դրամական միջոցները հնարավորություն են տվել մեր հանրապետությունում որոշ չափով թուլացնել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև այդ միջոցների մի մասը կապիտալ ներդրումների ձևով ուղղել արտադրության ոլորտ, ինչը նույնպես նպաստել է գործարարության (ձեռնարկատիրության) զարգացմանը:

Հանրապետությունը կանխիկ արտարժույթային միջոցներ է ստացել (և ստանում է) նաև այն ժամանակ, երբ էմիգրանտների մի մասը վերադարձել է հայրենիք՝ իր հետ բերելով կուտակած խնայողությունները:

Այսպիսով, միմյանց հաջորդող անհատույց փոխանցումները և էմիգրանտների կողմից կուտակած խնայողությունների մուտքը հայրենիք դիտվում են ազատ փոխարկելի արտարժույթի ստացման կարևոր աղբյուր: Ահա թե ինչու շատ երկրներ տնտեսական զարգացման բարձր արդյունքների հասնելու համար իրականացնում են արտագաղթի այնպիսի ճկուն քաղաքականություն, որը նպաստավոր պայմաններ կստեղծի արտերկրներում էմիգրանտների կուտակած խնայողությունները հիմնականում սեփական հայրենիքում ներդնելու համար: Այսպես, վերջին երկու տասնամյակներում Չինաստանի տնտեսական աճի տեմպերի արագացումը պետք է կապել նաև օտարերկրյա այն ուղղակի ներդրումների հետ, որոնք իրականացրել են Չինաստանից նախկինում արտագաղթածները՝ արտերկրներում կուտակելով հսկայական չափերի հասնող կապիտալ: Դա նշանակում է, որ աշխատանքային ռեսուրսների ավելցուկ ունեցող երկրների (այդ թվում՝ ՀՀ-ի) համար աշխատուժի արտահանումը վաղուց դարձել է նրանց կայուն տնտեսական

<sup>8</sup> Տե՛ս «ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2004թ. դեկտեմբերին կատարված հարցման արդյունքները»:

<sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգրքեր», Եր., 2001, էջ 408, Եր., 2003, էջ 455, Եր., 2004, էջ 453 և «ՀՀ-ի վճարային հաշվեկշիռը 1998-2002 թթ.», Եր., 2003, էջ 7:

գարգացումն ապահովելու կարևորագույն գործոն: Հետազոտությունները ցույց են տվել, որ աշխատուժի արտահանման արդյունավետությունը բավականին գերազանցում է ապրանքների և ծառայությունների արտահանման արդյունավետությանը: ԱՄՆ-ի հաշվարկներով, ապրանքների արտահանումից ստացված շահույթի միջին նորման կազմում է 20 %, ծառայությունների՝ 50 %, իսկ աշխատուժի արտահանումից՝ ավելի բարձր: Նախկին Հարավսլավիան 1980-ական թվականներին ապրանքների և ծառայությունների արտահանումից տարեկան ստանում էր 2,5 մլրդ դոլարի զուտ եկամուտ, իսկ աշխատուժի արտահանումից՝ 7 մլրդ դոլարի, որից 3,5 մլրդ-ը՝ տրանսֆերտների ձևով, նույնչափ էլ միգրանտները բերում էին իրենց հետ տուն վերադառնալիս<sup>10</sup>: Ռուս տնտեսագետների հաշվարկներով աշխատուժի արտահանման արտարժույթային արդյունավետությունը 5 անգամ բարձր է ապրանքների արտահանման արդյունավետությունից<sup>11</sup>:

3. ՀՀ-ից արտագաղթողների ճնշող մեծամասնությունը աշխատանքային ակտիվ տարիքում գտնվող գործազուրկներն են: Արտագաղթը որոշ չափով կրճատել է պետության ծախսերը կրթության, առողջապահության, գործազրկության և սոցիալ-տնտեսական այլ ուղղություններով:

4. Հայ միգրանտները արտասահմանյան երկրներում ձեռք են բերում աշխատանքային փորձ և գիտելիքներ, ծանոթանում տեխնիկայի և տեխնոլոգիաների նորագույն նվաճումների ու նոր-հաուների հետ և հայրենիք են վերադառնում ավելի բարձր որակավորում ստացած և ավելի բարձր արտադրական կուլտուրա և բիզնես կազմակերպելու ունակություններով: Միգրանտները հայրենիք են բերում նաև նյութական արժեքներ և խնայողություններ: Արդյունքում ոչ միայն ավելանում է մեր ազգային տնտեսության մեջ ներդրվող կապիտալը, այլև երկիրն անվըճար ստանում է բարձր որակավորում ունեցող լրացուցիչ աշխատուժ:

5. Էմիգրացիոն հոսքերը հնարավորություն են տվել որոշ չափով խուսափելու որակյալ աշխատուժի բարոյական արժեզրկումից, թեև հանրապետությունից «ուղեղների արտահոսքը» մինչ օրս չի դադարում:

Իսկ որո՞նք են աշխատուժի էմիգրացիայի բացասական հետևանքները ՀՀ -ի համար: Հենց սկզբից ասենք, որ զանգվածային արտագաղթի բացասական հետևանքները գերազանցում են դրականին: Դրանցից նշենք հետևյալները.

1. Հայաստանից հեռացել և շարունակում են հեռանալ բարձր որակավորում ունեցող անձինք: Դրա բացասական հետևանքները ավելի կզգացվի մոտ ապագայում: «Ուղեղների արտահոսքը» տեղի է ունենում կամ աշխատանք փնտրելու նպատակով արտերկիր մեկնելով, կամ զարգացած երկրներում հայ երիտասարդները բարձրագույն կրթություն ստանալուց հետո այլևս չեն վերադառնում հայրենիք: Նշյալ երևույթն առկա է այնպիսի ժամանակաշրջանում, երբ արդեն հանրապետությունը ազգային տնտեսության զարգացման համար բարձր որակավորում ունեցող մասնագետների խիստ կարիք է զգում: «Ուղեղների արտահոսքի» հետևանքով ՀՀ-ն կորցնում է իր ամենաթանկ կապիտալի (մարդկային կապիտալի) մի մասը: Թե դա ինչ արժե ՀՀ-ի համար, առայժմ չի հաշվարկվել: Օրինակ, Ռուսաստանի դաշնությունը «ուղեղների արտահոսքից» տարեկան կորցնում է 50-60 մլրդ դոլար, քանի որ ռուս գիտնականների 1/3-ը աշխատում է արտասահմանյան երկրներում<sup>12</sup>:

<sup>10</sup> Տե՛ս **Е. Ф. Авдакушин**, *Международные экономические отношения*, М., 2000, էջ 176-177:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 177:

<sup>12</sup> Տե՛ս **Е. С. Акопов, О. Н. Воронкова, И. Н. Гаврилко**, *Мировая экономика и международные экономические отношения*, Ростов на Дону, 2001, էջ 335:

Թեև «ուղեղների արտահոսքը» չի դադարում, այնուամենայնիվ դրանից հետո էլ Հայաստանը դեռևս մնում է գիտական մեծ ներուժ ունեցող երկիր և լավ գործընկեր աշխարհի շատ երկրների համար: Այդ երկրները Հայաստանի հետ կարող են փոխանակել գիտնականներ, ինչպես նաև տարբեր ոլորտներում ստեղծել համատեղ ձեռնարկություններ, ուսումնասիրել գիտատեխնիկական նորագույն մվածումները, բարձրացնել կադրերի որակավորումը: Այսպես, օրինակ, կաուչուկի արտադրության գծով Չինաստանում կազմակերպվում է համատեղ ձեռնարկություն: Հայկական կողմը միայն կիրականացնի ինժեներային մշակումներ: Դավկայում է այն մասին, որ մեր հայրենական գիտատեխնիկական ներուժի կարիքն ունի անգամ Չինաստանի նման հզոր երկիրը: Այլ խոսքով՝ ՀՀ-ի արդյունաբերական մտավոր սեփականության օբյեկտները (արտոնագիր, արդյունաբերական նշան, նոու-հաու և այլն) որպես ապրանքներ այսօր ընդունակ են հաջողությամբ մրցակցելու համաշխարհային շուկայում: Դա նշանակում է, որ, ամեն ինչից անկախ, լավ նոու-հաուները (կոմերցիոն գաղտնիքները) միշտ էլ գին ունեն:

2. Էմիգրանտները արտասահմանյան երկրներ մեկնելու համար պետք է ստանան որոշակի ծառայություններ և դրանց դիմաց կատարեն վճարումներ: Այդ ծառայությունները սկզբնական շրջանում էմիգրանտներին մատուցվել են արտասահմանյան կազմակերպությունների կողմից, քանի որ Հայաստանում նման ծառայություններ իրականացնող կազմակերպություններ կամ չեն եղել, կամ էլ եղածներն այն չէին, որպեսզի բավարարեին էմիգրանտների պահանջները: Արդյունքում տեղի է ունեցել ֆինանսական կապիտալի արտահոսք, ինչն էլ իր բացասական ազդեցությունն է ունեցել մեր երկրի տնտեսության վրա:

Ջանգվածային արտագաղթի հետևանքով Հայաստանը ֆինանսական կորուստներ է կրել (և շարունակում է կրել) նաև այն պատճառով, որ արտագաղթողները հիմնականում եղել են նրանք, ովքեր կրթություն և մասնագիտական պատրաստություն են ստացել պետական միջոցների հաշվին, բայց միգրանտի կարգավիճակով հարկ վճարում են արտասահմանյան երկրներում: Բացի այդ, տարբեր պատճառներով տեղի է ունեցել կապիտալի «փախուստ», որին նպաստել են հանրապետության չգարգացած ենթակառուցվածքը, «արտոնյալ» որոշ անձերի անվերահսկելիությունը, օրենսդրական դաշտի անկատար լինելը և այլն: Նշենք նաև, որ «կապիտալի» փախուստն իր հետ տարել է երիտասարդությանը:

3. Վերջին տարիներին արտագաղթի հոսքերը ներառել են նախկին աշխատանքային միգրանտների ընտանիքների անդամներին, որոնք 1990-ական թվականներին արտագաղթել են մշտական բնակություն հաստատելու նպատակով: Դա խոսում է այն մասին, որ էմիգրանտները սկզբնական շրջանում հանրապետությունից իբր դուրս են գալիս ժամանակավորապես, բայց հետագայում իրենց են «ձգում» հայրենիքում մնացած հարազատներին արտասահմանում մշտական բնակություն հաստատելու նպատակով, որի հետևանքով աստիճանաբար կրճատվում են ընթացիկ տրանսֆերտները: Դա նաև նշանակում է, որ նախկին աշխատանքային էմիգրացիան դարձել է արտագաղթը խթանող կարևոր գործոն:

4. Մշտական արտագաղթի հետևանքով ազգային աշխատուժի շուկայի որակազրկման գործընթացը դարձել է ավելի արտահայտիչ, քանի որ արտագաղթողների մեջ բարձր որակավորում ունեցող մասնագետների տեսակարար կշիռը բավական մեծ է: Որակյալ աշխատուժի ներմուծումից շահում են ընդունող երկրները: Օրինակ՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների ներմուծումից ԱՄՆ-ը տարեկան շահում է 80-100 մլրդ դոլար<sup>13</sup>: ԱՄՆ-ի տնտեսության զարգացման գործում

<sup>13</sup> Տե՛ս В. Ивановец, Миграционная политика буржуазных государств, М., 1980, էջ 11-12 :

«տղեղներին» ներմուծման դերն անցյալ դարի 70-ական թվականներին բարձր են գնահատել ամերիկյան քաղաքական գործիչներ Դ. Ռասսելը և ՈՒ. Դուգլասը: Նրանք գտնում էին, որ ԱՄՆ-ում անհրաժեշտ քանակությամբ բարձր որակի մասնագետներ պատրաստելը մախ պահանջում է երկար ժամանակ (10 տարուց ոչ պակաս), երկրորդ՝ շատ ծախսեր: Բացի այդ, ներկայումս ԱՄՆ-ում գիտությանը զբաղվող երիտասարդների թիվը աստիճանաբար կրճատվում է: Ահա թե ինչու ԱՄՆ-ը միշտ էլ աշխարհի տարբեր երկրներից ներգրավել է բարձր որակի մասնագետներ:

5. Արտագաղթի պատճառով ինչ-որ չափով մեծացել է հանրապետության աշխատավորների հարկային բեռը, որովհետև նրանք ստիպված են վճարելու ավելի շատ հարկեր, որպեսզի ապահովեն պետության բոլոր տեսակի պահանջմունքները, այդ թվում՝ հասարակական բարիքների արտադրության ֆինանսավորումը, մանավանդ որ, որպես կանոն, Հայաստանի ամենախոշոր գործարար-օլիգարխները հարկեր վճարում են նվազագույն չափերով: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ հասարակական բարիքների արտադրության վրա կատարվող ծախսերն այնքան էլ կախված չեն երկրում ապրող բնակչության թվաքանակից: Էմիգրացիայի հետևանքով հայրենիքում աշխատող բնակչության ծանրաբեռնվածությունը բարձրացել է նաև այն առումով, որ նրանք են հոգում չաշխատող և խնամքի խիստ կարիք ունեցող իրենց հարազատների հոգսերը:

6. Շարունակական բնույթ կրող արտագաղթի հետևանքով Հայաստանում արտադրվող ՀՆԱ-ն և պետական բյուջեի եկամուտները դեռևս չեն հասել այն ծավալներին, որ կառավարությանը հնարավորություն տան պետական ֆինանսների հաշվին մեծացնելու ներդրումները և համապատասխան ծախսեր կատարելով՝ պատշաճ նակարդակով լուծելու սոցիալական բնույթի բազմաթիվ խնդիրներ:

7. Արդյունաբերապես զարգացած մախկին ՀՀ-ն վերածվել է սպառող երկրի: Բազմաթիվ գործոնների ազդեցությամբ իջել է թողարկվող արտադրանքի մրցունակությունը:

8. Հանրապետության տնտեսության շատ ոլորտներում (առևտուր, սպասարկում և այլն) նշանակալիորեն մեծացել է աշխատանքային օրվա տևողությունը և աշխատանքի ինտենսիվությունը: Սակայն աշխատունակ մարդը քանի՞ տարի կարող է այդ լարվածությանը դիմանալ: Վերելք ապրող օրգանիզմը չնայած կարող է դիմանալ օրական 12-14 ժամվա գերլարված աշխատանքին, այնուամենայնիվ նման մարդկանց աշխատանքային ակտիվության կորագծի իջեցման ընթացքն արագանում է: Գերլարված աշխատանքից այն, ինչ շահում է երիտասարդ հասակում, ավելին կորցնում է հետագայում: Դեռևս կենսաթոշակի տարիքի չհասած՝ նրա աշխատանքային լարվածությունը իջնում է նորմալ միջին մակարդակից ցածր, և ժամանակից բավական շուտ նա թողնում է իր ակտիվ աշխատանքային կյանքը: Ահա թե ինչու ժամանակին մարդիկ պայքարել են հասնելու 8-ժամյա աշխատանքային օրվա և հնգօրյա աշխատանքային շաբաթի: Իսկ այժմ Ֆրանսիայի բանվորները պայքարում են չորսօրյա աշխատանքային ռեժիմի անցնելու համար<sup>14</sup>:

9. ՀՀ-ն կորցրել է առավել աշխատունակ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսների զգալի մասը: Մինչդեռ «Ցանկացած երկրի գլխավոր հարստությունը նրա աշխատանքային ռեսուրսներն են: Երկրի տնտեսական ու սոցիալական բոլոր հիմնախնդիրների լուծման հանգուցակետում այդ գլխավոր հարստության ակտիվության բարձրացման հիմնախնդիրը անխուսափելիորեն պետք է դառնա պետության սոցիալ - տնտեսական ծրագրի և գաղթի քաղաքականության

<sup>14</sup> Տե՛ս Վ. Ե. Խոջաթեկյան, նշվ. աշխ., էջ 322:

կարևորագույն բաղադրամասը»<sup>15</sup>: Աշխատանքային ռեսուրսներն ավելացնելու նպատակով կատարվող ներդրումները փոխհատուցվում են արագորեն և դառնում նոր ներդրումների աղբյուր, քանի որ աշխատունակ մարդն իր աշխատանքով ստեղծում է ոչ միայն իր, այլև հասարակության համար՝ հարստացնելով տվյալ երկիրը:

Տնտեսապես ակտիվ բնակչության զգալի մասի արտագաղթի հետևանքով տեղի է ունեցել հանրապետության աշխատանքային ռեսուրսների ծերացում, քանի որ արտագաղթածների մեջ բարձր է մինչև 49 տարեկանների, մասնավորապես երիտասարդների տեսակարար կշիռը: 1997թ. սկսած՝ արտագաղթածների մեջ մինչև 49 տարեկանները կազմել են միջին հաշվով 70 %-ից ավելին: Ընդ որում, տղամարդկանց համեմատությամբ արտագաղթած կանանց մեջ մինչև 49 տարեկանների տեսակարար կշիռը եղել է ավելի բարձր:

10. ՀՀ-ից արտագաղթը որոշակի ազդեցություն է ունեցել բնակչության գենոֆոնդի և թվաքանակի վրա: Բանն այն է, որ առայժմ չկան հաշվարկների այնպիսի հիմնավոր մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր լինի տալու բնակչության գենոֆոնդի վրա արտագաղթի ազդեցության գնահատականները, թեև դրանք շատ կարևոր են անհրաժեշտ վերլուծությունների և համապատասխան քաղաքականությունների մշակման համար: Արտագաղթի ազդեցությունը բնակչության գենոֆոնդի վրա ավելի կզգացվի տարիներ հետո: Բայց, մեր կարծիքով, այսօր էլ ոչ մեկի մեջ կասկած չեն առաջացնում այն փաստերը, որ արտագաղթի հետևանքով կրճատվել է ոչ միայն ՀՀ-ի բնակչության թվաքանակը<sup>16</sup>, այլև պակասել է երեխաների ծնունդը և 1988 թ. համեմատությամբ գրեթե 3 անգամ նվազել է բնական աճը: 2000-2003 թթ. ՀՀ-ի բնակչության բնական աճը 1000 բնակչի հաշվով կազմել է ընդամենը 2,7–3,1 մարդ<sup>17</sup>: Լայնածավալ արտագաղթի հետ կապված՝ ՀՀ բնակչության բնական աճի խիստ նվազումը դարձել է ազգային անվլտանգության կարևոր խնդիր, քանի որ արտագաղթողները հիմնականում չեն վերադառնում և ձուլվում են այլ ազգերի և ազգությունների:

11. Արտագաղթի պատճառով զգալի չափով փոխվել են ՀՀ-ի բնակչության ազգային կազմը և հայաստանաբնակ հայերի տեսակարար կշիռը աշխարհի հայերի ընդհանուր թվաքանակի մեջ:

Թիվ 4 աղյուսակի տվյալները վկայում են, որ ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի կողմից դրսևորվող առավել մեծ միգրացիոն ակտիվության պատճառով այժմ հանրապետության մշտական բնակչության 97,9 %-ը կազմում են հայերը, երկրորդ տեղում են եզդիները (1,26 %), երրորդում՝ ռուսները (0,46 %): ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի թիվը և՛ բացարձակ, և՛ հարաբերական առումներով բավականին կրճատվել է: 1926-ին կազմել է 15,62, 1939-ին՝ 17,18 1959-ին՝ 11,99, 1970-ին՝ 11,4, 1979-ին՝ 10,1, 1989-ին՝ 4,5, 2001-ին՝ 2,1%:

ՀՀ-ից արտագաղթը հասցրել է այն բանին, որ աշխարհի հայերի ընդհանուր թվաքանակի մեջ իջել է հայրենաբնակ հայերի տեսակարար կշիռը: Ռուսաստանում և ԱՄՆ-ում բնակվող (օրինական և անօրինական կարգով) հայերի թվաքանակը գերազանցում է ՀՀ-ում բնակվող հայերին: ՌԳ-ում օրինական կարգով ապրում են 1,5 մլն –ից ավելի հայեր, միայն Կրասնոդարի երկրամասում՝ 800 հազար:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 343:

<sup>16</sup> 1989 թ. ՀՀ-ի բնակչության թվաքանակը կազմել է 3,4, իսկ 2001-ին՝ 3,2 մլն մարդ (տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Եր., 2004, էջ 25):

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 31:



ՀՀ-ի բնակչության ազգային կազմն ըստ մարդահամարների տվյալների<sup>10</sup>

Մարդահամարի տարեթիվը	1926		1939		1959		1970		1979		1989		2001	
	հազ. մարդ	%-ով	հազ. մարդ	%-ով	հազ. մարդ	%-ով	հազ. մարդ	%-ով	հազ. մարդ	%-ով	հազ. մարդ	%-ով	հազ. մարդ	%-ով
Ամբողջ բնակչությունը	881,3	100	1282,3	100	1763,0	100	2491,8	100	3030,7	100	3228,3	100	3213	100
Այդ թվում՝	743,6	84,38	1062,0	82,82	1551,6	88,01	2208,3	88,6	2725,0	89,9	3083,6	95,5	3145,4	97,9
հայերը														
արդրեզանցիները	84,0	9,53	130,9	10,21	107,7	6,11	148,2	5,95	160,8	5,31	8,5	0,26	-	-
ռուսները	19,5	2,21	51,5	4,02	56,5	3,21	66,1	2,65	70,3	2,32	51,5	1,6	14,7	0,46
եզդիները	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	40,6*	1,26
քրդերը	15,3	1,74	20,5	1,6	25,6	1,45	37,5	1,5	50,8	1,68	56,1	1,74	1,5	0,05
հույները	3,8	0,43	4,2	0,33	5,0	0,28	5,7	0,23	5,7	0,19	4,6	0,14	1,2	0,04
ասորիներ	2,2	0,25	3,3	0,26	4,3	0,24	5,5	0,22	6,1	0,2	6,0	0,18	3,4	0,11
ուկրաինացիներ	2,8	0,32	5,5	0,43	5,6	0,32	8,4	0,34	8,4	0,28	8,3	0,25	1,6	0,05
այլ ազգեր և ազգություններ	10,9	1,24	4,4	0,34	6,7	0,38	12,2	0,49	9,5	0,31	9,7	0,3	4,6	0,14

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ-ի 2001 թ. մարդահամարի արդյունքները, Եր., 2003, էջ 360, Մ. Վ. Չախրադյան, Պ. Ս. Փալոբյան, Մարդահամար 2001 թվականին, Եր., 2001, էջ 16:

\* Նախորդ մարդահամարների ժամանակ եզդիներին գրանցել են «քրդեր» անվան տակ:

Այժմ հայերի թվաքանակը աշխարհում կազմում է 9,5 մլն, որից 6,3 մլն-ը՝ Հաստատանից դուրս ավելի քան 75 երկրներում<sup>19</sup>:

Արտագաղթը ՀՀ-ից որոշակի ազդեցություն է ունեցել նաև բնակչության սեռատարիքային կազմի, երեխաների և տարեցների (թոշակառուների) տեսակարար կշիռների, ընտանիքի միջին մեծության, հանրապետության քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի հարաբերակցության, բնակչության շերտավորման և այլնի վրա: Նման ազդեցությունների բացահայտումը նույնպես անհրաժեշտ է մի շարք կարևոր հարցեր պարզաբանելու համար: Օրինակ, պետք է ճշտել ՀՀ-ի բնակչությունն արդյոք բավարարո՞ւմ է մեր երկրի զարգացման այսօրվա պահանջներին, թե՞ ոչ: Իսկ պահանջները բավականին շատ են: Այսպես, երկրի անվտանգության ապահովման նպատակով մարտունակ բանակ ունենալու համար բնակչության թվաքանակի առաջիկա շարժի կանխատեսման առումով անհրաժեշտ է իրականացնել հատուկ ուսումնասիրություններ: Ինչո՞ւ: Որովհետև երիտասարդների արտագաղթը հասցրել է այն բանին, որ 1994 թ. սկսած՝ տարեցտարի կրճատվել է մեր բանակում ծառայողների թիվը: Հետևապես, բնակչության արտագաղթը (հատկապես մինչգորակոչային և զորակոչային տարիքի) չի բխում երկրի պաշտպանունակության և ռազմական հզորացման շահերից: Արտագաղթի այդ բացասական կողմն ավելի կզգացվի 2010 թ. սկսած, քանի որ այդ ժամանակ զորակոչի տարիքի տղաները կլինեն 1992 թ. հետո ծնված երեխաները:

Հայ բնակչության արտագաղթի հետևանքներից մեկն էլ այն է, որ ընդունող շատ երկրներում ձևավորվում են հայկական համայնքներ, որոնք մի կողմից իրենց սովորություններն են թելադրում տեղական բնակչությանը, մյուս կողմից իրենք են ինտեգրվում: Աշխարհում տեղի ունեցող մման գործընթացները արագացնում են վերազգային հասարակության ձևավորումը, որի դրական և բացասական կողմերն ի հայտ կգան ժամանակի ընթացքում:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 1,5 տասնամյակի ընթացքում հայերի զանգվածային արտագաղթն առաջացրել է տարբեր բնույթի խնդիրներ, որոնց լուծումը անպայման ենթադրում է արդյունավետ միգրացիոն քաղաքականություն: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ ՀՀ կառավարությունը վերջերս էլ ավելի ակտիվ գործունեություն է ծավալել բնակչության միգրացիոն գոծընթացների պետական կարգավորման ուղղությամբ, որի դրսևորումներից մեկը «Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության կողմից 2004 թ. հունիսի 25-ին ընդունած որոշումն է: Հայեցակարգը «... մոտակա և տևական հեռանկարում միգրացիոն գործընթացների զարգացումները վերահսկելի և նախընտրելի ուղղություններով ապահովելու համար ՀՀ իշխանության մարմինների դիրքորոշումների, խնդիրների ու դրանց լուծմանն ուղղված մոտեցումների համակարգ է»<sup>20</sup>, որում տրված են պետական միգրացիոն քաղաքականության առավել կարևոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված հիմնական մեխանիզմները: Այդ կարևոր փաստաթղթում նաև նշված են այն սկզբունքները, որոնցով ղեկավարվելով՝ հնարավոր կլինի որոշ չափով նվազեցնել ՀՀ բնակչության արտագաղթը, այսինքն՝ իրականացնել պետության միգրացիոն քաղաքականության գերխնդիրը:

<sup>19</sup> ՀՀ-ից դուրս ապրող հայերի թվաքանակի մասին քերված տվյալները վերցված են՝ Ս. Ա. Մելքունյան, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Եր., 2000, էջ 70-74:

<sup>20</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության միստի արձանագրությունը», 25 հունիսի, 2004թ., թիվ 24:

ՀՀ պետական միգրացիոն քաղաքականության մեջ կիրառվում է **կարգավորող պետական համակարգի ռեժիմ**, քանի որ մեր ժողովուրդը դեռևս ունի արտագաղթելու ձգտում և ի վիճակի չէ արտագաղթի գործընթացն ինքնուրույն կարգավորել այնպես, որ չվնասի մեր երկրի շահերին: Ռեժիմի կարևոր պահանջներից է, որ աշխատուժի էմիգրացիան կազմակերպվի վերադարձի պայմանով, ինչը հնարավորություն կտա երկրում մշտապես ունենալ անհրաժեշտ թվով բնակչություն: Նման քաղաքականության իրականացումը հնարավոր է համապատասխան օրենքների ընդունմամբ, որոնք կնախատեսեն, թե էմիգրանտները քանի ամիս կամ քանի տարի պետք է մնան արտասահմանում: Իսկ դա իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում համապատասխան միջպետական համաձայնագրերով կարգավորել միգրացիոն գործընթացների հետևանքով առաջացող խնդիրները՝ կապված էմիգրանտների պաշտպանության, ռեէմիգրացիայի հոսքերի կարգավորման, անօրինական միգրացիայի կանխարգելման հետ: Սակայն ՀՀ-ի վիճակը, հատկապես գործազրկության բարձր մակարդակի առկայությունը, այնպիսին է, որ մի կողմից ռեէմիգրացիայի հոսքերի ստեղծումն այսօր չի բխում մեր երկրի շահերից, իսկ մյուս կողմից չի կարելի ձգձգել նման հոսքերի ձևավորումը, քանի որ այն վտանգավոր կլինի ապագայի համար՝ կապված երկրի ռազմական զարգացման շահերի և հայ բնակչության բնականոն վերարտադրության հետ: Նման պայմաններում խնդրի լուծման տարբերակներից է **էմիգրացիոն հոսքերի քվոտավորումը**, այսինքն՝ պետությունը կազմակերպի աշխատանքային էմիգրացիան և սահմանի էմիգրանտների օպտիմալ թվաքանակը: Իսկ գործազրկության բարձր մակարդակը մեղմելու համար անհրաժեշտ է, որ առաջնությունը տրվի տրնտեսության զարգացման էքստենսիվ ուղիներին: Կարելի է կիրառել նաև միգրացիայի «քարտերային» տարբերակը, որի դեպքում մեր երկրից էմիգրանտներ ընդունող երկիրը պետք է նրանց տրամադրի արտոնյալ պայմաններ, վոխարենը՝ մենք պարտավորվենք իրենց երկրից ներմուծել ներդրումային ապրանքներ: Նման տարբերակի կիրառումը կնպաստի արտադրության զարգացմանն առանց օտարերկրյա ներդրողներից կախվածության:

Այսպիսով, տարբեր ձևերով արտագաղթի պետական կարգավորումը հնարավորություն կտա ոչ միայն ինչ-որ չափով մեղմել արտագաղթի բացասական հետևանքները, այլև իջեցնել արտագաղթի ամենահիմնական պատճառ հանդիսացող գործազրկության բարձր մակարդակը և բարենպաստ պայմաններ ստեղծել տնտեսության տարբեր ճյուղերի ինտեսիվ զարգացման համար:

**Г. С. АГАДЖАНИЯ - Социально-экономические последствия эмиграции в Республике Армения.** - Тщательно анализируя положительные и отрицательные социально-экономические последствия эмиграции населения за последние 1,5 десятилетия, автор приходит к заключению, что республика больше потеряла, чем приобрела от экспорта рабочей силы. Для решения проблем, возникших в результате широкомасштабной эмиграции, автор предлагает, чтобы правительство РА активизировало свою деятельность в направлении государственного регулирования межгосударственных миграционных процессов, чему, конечно, будет способствовать решение правительства от 25 июня 2004 г. "О концепции государственного регулирования миграции населения Республики Армения". В статье также предлагаются другие меры государственного регулирования миграции, применение которых будет способствовать смягчению отрицательных последствий эмиграции в республике.